# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** N64 -Ա
07 մարտի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 299 ՈՐՈՇՄԱՄԲ, ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՐԱՏ ԽԱՉԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 10 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլփաստաթղթերի տրամադրման կարգի>> 123-125-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Արարատ Խաչիկի Գևորգյանի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատարին հասցեագրված 2023 թվականի մարտի 7-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկի փողոցի թիվ 20/20 հասցեում առևտրի սրահ կառուցելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 31-ին տրամադրած N 10 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 31-ի N 299 որոշմամբ, առևտրի սրահ կառուցելու համար, քաղաքացի Արարատ Խաչիկի Գևորգյանին տրամադրված 2019 թվականի հոկտեմբերի 31-ի N 10 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև սահմանված կարգով շահագործման թույլտվության (ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտի) վավերացումը:

2. Կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում շինարարությունը չավարտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային արժեքի

մեկ տոկոսի չափով՝ գումարով 12 000 (տասներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101124 հաշվեհամարին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կառուցապատողին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՋՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«07» մարտի 2023 թվականի
քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 65-Ա

07 մարտի 2023 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-0021-0001/ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Անժելիկա Հարությունյանի դիմումը. ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-003-0021-0001/ հողատարածքում գտնվող 0.48հա հողամասը և ամրակցված շենք-շինություններին տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Մարալիկ քաղաք, 7-րդ փողոց, 2/1 հասցեում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ**
**ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԺՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

«07» մարտի 2023 թվական
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ու Մ N 66 -Ա

<< 09>> մարտի 2023 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-049-0013-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Միհրան Ղազարի Քալաշյանի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատարին հասցեգրված 2023 թվականի փետրվարի 24-ի դիմումը՝ 1989 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինական ճանաչելու մասին.

**որոշում եմ՝**

1. Հաշվի առնելով, որ քաղաքացիներ՝ Միհրան Ղազարի Քալաշյանին /ծնված՝ 02-ը հունիսի 1951 թվական, նույնականացման քարտ՝ N 01470-5644, տրված 09.07.2022 թվականին՝ 022-ի կողմից/, Քալաշյան Խազալ Միհրանի /ծնված՝ 25-ը մարտի 1976 թվական/, Քալաշյան Գյոզալ Միհրանի /ծնված՝ 27-ը նոյեմբերի 1977 թվական/, Քալաշյան Նազիկ Միհրանի /ծնված՝ 29-ը մայիսի 1981 թվական/, Քալաշյան Նադեժդա Միհրանի / ծնված՝ 17-ը հեկտեմբերի 1984 թվական/, Քալաշյան Շարե Միհրանի /ծնված՝ 07-ը նոյեմբերի 1986 թվական/, Քալաշյան Հերիք Միհրանի /ծնված՝ 22-ը հուլիսի 1990 թվական/, Քալաշյան Ջինե Միհրանի /ծնված՝ 07-ը ապրիլի 1979թվական/ (հետագայում՝ քաղաքացիներ) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի 2-րդ փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 4 հասցեում գտնվող 08-049-0013-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.118633 հեկտար մակերեսով հողամասում (հիմք հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողվի 25.04.1991 թվականի N3 որոշում) 1989 թվականին ինքնակամ կառուցված 161.99 քառակուսի մետր բնակելի տունը և 17.8 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով մառանը՝ բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ

հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության շինությունները ճանաչել օրինական:

2. Հաշվի առնելով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 22.1-րդ կետի հիմքով քաղաքացիները ազատվում են նշված կարգով սահմանված վճարների գանձումից:

3. Օրինական ճանաչված շինության և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամսի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

4. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներին սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ** **ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

<<09>> մարտի թվականի 2023
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 67-Ա**

<<10>> մարտի 2023 թվական

**<<ԱՆԻ>> ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑ ՆՈՐԱԲԵՐ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-090-0218-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով <<ԱՆԻ>> բաց բաժնետիրական ընկերության տնօրենի 2023 թվականի փետրվարի 23-ի N 02.004 գրությունը՝ <<ԱՆԻ>> բաց բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի փողոց Նորաբեր թիվ 2 հասցեյում գտնվող 08-090-0218-0004 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված հասարակական նպատակային նշանակության շինություններն օրինական ճանաչելու վերաբերյալ.

**որոշում եմ՝**

1. Հաշվի առնելով, որ <<ԱՆԻ>> բաց բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի փողոց Նորաբեր թիվ 2 հասցեում գտնվող 08-090-0218-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.3 հեկտար հողամասում /Վկայական՝ 2833956, տրված՝ 27.10.2011թ, ԱԳԼԾԿ/ ինքնակամ կառուցված ընդամենը 273.31 քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական նպատակային նշանակության շինությունները /գործառնական նշանակությունները՝ օպերատորային, սպասարկման սրահ, շվաքարան, առևտրի սպասարկման կետ, ավտոլվացման կետ, կուտակիչների կետ/, /հետագայում՝ շինություններ/ բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի

188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունները ճանաչել օրինական:

2. Օրինական ճանաչված շինությունների և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունները՝

ա) չեն գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ինքնակամ կառույցն օրինական ճանաչելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա) Շինությունները, որոնց ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 273.31 քառակուսի մետր, որպես հասարակական նշանակության կառույց, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 16-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված Շիրակավան բնակավայրի համար սահմանված շինության 0.0536 գործակցի կիրառմաբ, վճարի չափը կազմում է՝

**273.31 քառակուսի մետր X 20000 դրամ X 0.0536 = 293 000 (երկու հարյուր իննսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:**

գ) Ինքնակամ շինության օրինականացման համար վճարի չափը սահմանվում է 293 000 (երկու հարյուր իննսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101447 հաշվեհամարին:

դ) Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5, Պարտավորեցվում է անշարժ գույքի սեփականատեր <<ԱՆԻ>> բաց բաժնետիրական ընկերությանը՝ սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում <<ԱՆԻ>> բաց բաժնետիրական ընկերության տնօրինությանը սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

<<10>> մարտի թվականի 2023
քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 68-Ա

13 մարտի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-100-0024-0010/ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-100-0024-0010/,բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր, 10-րդ փողոց, 1-ին նրբանցք, 2 բնակելի տուն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ**
**ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ** **ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

«13» մարտի 2023 թվական

քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 69-Ա

13 մարտի 2023 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-100-0064-0004/ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Նորայր Անուշավանի Ասլանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-100-0064-0004/ տնամերձ հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 6 հողամաս:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ** **ԺՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

«13» մարտի 2023 թվական
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ν 70-Ա**

<<13>> մարտի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ 08-100-0065-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերի, հիմք ընդունելով քաղաքացի Կարապետ Հակոբի Կնյազյանի կողմից Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարողին ներկայացված 2023 թվականի մարտի 6-ի դիմումը՝ 2017 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տանը կից տնտեսական շինությունը օրինական ճանաչելու մասին.**որոշում եմ՝**

1. Հաշվի առնելով, որ քաղաքացիներ՝ Կարապետ Հակոբի Կնյազյանին /ծնված՝ 2-ը նոյեմբերի 1962 թվական, անձնագիր N AT 0699-1666, տրված 16.03.2021 թվականին, տրված 022-ի կողմից/, Կնյազյան Դինա Վասիլևնաին /ծնված՝ 24-ը ապրիլի 1973 թվական, անձնագիր N ն/ք 00557-3100, տրված 21.05.2014 թվականին, տրված 022-ի կողմից/, Կնյազ Կարապետի Կնյազյանին /ծնված՝ 15-ը օգոստոսի 1991 թվական, անձնագիր N ն/ք 00731-5955, տրված 14.01.2016 թվականին, տրված 022-ի կողմից/,սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի 22-րդ փողոց, 3 բնակելի տուն հասցեում գտնվող 08-100-0065-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.22900 հա մակերեսով հողամասում (Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 24.05.1991 թվականի N 1 որոշում) 2016 թվականին ինքնակամ կառուցված անասնաշենք 49,09 քառակուսի մետր, 2017 թվականին ինքնակամ կառուցված տնտեսական շինությունները՝ 51,61 քառակուսի մետր, 2018 թվականին ինքնակամ կառուցված՝ ատամնաբուժարան 50,31 քառակուսի մետր,

ավտոտնակ 141,60 քառակուսի մետր, սանհանգույց 2,33 քառակուսի մետր, պարիսպ 0,53 քառակուսի մետր և 2019 թվականին ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը 15,24 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տանը կից տնտեսական շինությունները /հետագայում՝ շինություն/ բավարարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունը ճանաչել օրինական:

2. Օրինական ճանաչված շինության և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա) Շինությունը, որի ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 259.41 քառակուսի մետր, որպես բնակելի նշանակության կառույց, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 13-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ ավտոտնակ՝ 141,60 x 6000 x 0,0743= 63125 Հայաստանի Հանրապետության դրամ, սանհանգույց՝ 2,33 x 6000 x 0,0743=1038 Հայաստանի Հանրապետության դրամ, անասնաշենք՝ 49,09 x 6000 x 0,0743=21884 Հայաստանի Հանրապետության դրամ, տնտեսական շինություն՝ 51,61 x 6000x0,0743=23007 Հայաստանի Հանրապետության դրամ, օժանդակ շինություն՝ 15,24 x 6000 x 0,0743 =6793 Հայաստանի Հանրապետության դրամ, պարիսպ՝ 0,53 x 6000 x 0,0743=236 Հայաստանի Հանրապետության դրամ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 2-րդ գոտում ընդգրկված Սառնաղբյուր բնակավայրի համար սահմանված շինության 0.0743 գործակցի կիրառմաբ, վճարի չափը կազմում է՝

Ընդամենը՝ 190843 /Մեկ հարյուր իննսուն հազար ութ հարյուր քառասուն երեք/ Հայաստանի Հանրապետության դրամ:

գ) Ինքնակամ շինության օրինականացման համար վճարի չափը սահմանվում է 190843 (Մեկ հարյուր իննսուն հազար ութ հարյուր քառասուն երեք) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101447 հաշվեհամարին:

դ) Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Պարտավորեցնել անշարժ գույքի սեփականատեր Կարապետ Հակոբի Կնյազյանին ՝ սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարապետ Հակոբի Կնյազյանին սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

<<13>> մարտի 2023 թվական
քաղաք Մարալիկ